Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 580 - Ա
որոշման

«ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում նախկինում բարեգործական ծրագրի շրջանակներում կառուցված մանկապարտեզի կենցաղային պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է ձեռք բերել գույք, տեղափոխել և տեղադրել այն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք, Լեռնագոգ գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	3,623,547 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք, «Լեռնագոգի մանկապարտեզ» ՀՈԱԿ (ՀՎՀՀ՝ 04420216)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 8-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի «Լեռնագոգի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի համար ձեռք բերել պրոֆեսիոնալ էլեկտրական սալօջախ, լվացքի մեքենա և սառնարան, տեղափոխել և տեղադրել դրանք: Իրականացվելու է 2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,623,547 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Պրոֆեսիոնալ էլեկտրական սալօջախի, լվացքի մեքենայի և սառնարանի ձեռքբերման, ոտնակների և սարքավորումների տեղադրման, էլեկտրամալուխ-ների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակ-ների անցկացման և միացման աշխատանքների իրականացում՝ 3,623,547 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ